ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ[1] ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	**Առաջարկի անվանումը**	**Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)**	**Առաջարկի կարգավիճակը** • *Ընդունվել է* • *Մերժվել է*	**Մերժման դեպքում՝ հիմնավորումը**
1.	Խաղահրապարակի կառուցում և մարզասարքերի տեղադրում	Առաջարկում եմ Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրում կառուցել ժամանակակից, անվտանգ և գունագեղ խաղահրապարակ՝ նախատեսված տարբեր տարիքային խմբի երեխաների համար: Տարածքը որը նախատեսում ենք խաղահրապարակի համար կան արդեն սարքավորումներ, որոնք ցավոք գտնվում են ոչ բարվոք վիճակում, առաջարկում եմ հինը փոխարինել նոր սարքավորումներով, ճոճանակներով, տնակներով, նստարաններով և այլն: Նախագիծը կնպաստի համայնքի երեխաների սոցիալականացմանը, ծնողների հանգստին և ընդհանու միջավայրի բարեկարգմանը:	Ընդունվել է	
2.	**ԵԿԵՂԵՑԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ 6-ՐԴ ԴԱՐ**	Առաջարկում եմ Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի Ս.Գևորգ եկեղեցում կատարել տանիքի վերանորոգման աշխատանքներ, պահխանելու պատմական, մշակութային և հոգևոր նշանակություն ունեցող կառույցը: Եկեղեցու տանիքը տարիների ընթացքում վնասվել է՝ առաջացնելով ջրային ներթափանցումներ և կառուցվածքային քայքայում:Աշխատանքները ներառում են տանիքի հին ծածկույթի հեռացում, փայտյա կամ մետաղական կառուցվածքի վերականգնում, ջրակայուն նյութերի կիրառմամբ նոր ծածկույթի տեղադրում և ջրահեռացման համակարգի բարելավում:	Մերժվել է	ՏԻՄ-ի իրավասությունների շրջանակում չի գտնվում
3.	Խաղահրապարակի կառուցում և խաղային սարքավորումների տեղադրում	Լոռի Բերդ բնակավայրը լինելով երիտասարդ բնակչություն ունեցող բնակավայր, չունի երեխաների համար հարմարավետ և անվտանգ հանգստի վայր: Ծրագիրը նախատեսում է կառուցել ժամանակակից չափանիշներին համապատասխան խաղահրապարակ՝ բնակավայրի կենտրոնական հատվածում: Նախագծով կկատարվեն հողային հարթեցման աշխատանքներ, կտեղադրվեն սահնակներ, ճոճանակներ, կարուսելներ, խաղային տաղավարներ, նստարաններ և աղբամաններ: Խաղահրապարակը կծառայի ոչ միայն երեխաներին, այլև ծնողներին՝	Ընդունվել է	

		դառնալով համայնքի սոցիալական շփման, հանգստի և համերաշխության վայր:		
4.	Ֆուտբոլի դաշտի բարեկարգում	Առաջարկում եմ Լոռի Բերդ բնակավայրի այն տարածքը որը նախատեսված է եղել ֆուտբոլի և բասկետբոլի դաշտի համար , սակայն այս պահին գտնվում է անմխիթար վիճակում: Առաջարկս է բարեկարգել տարածքը և գոլայն վահանակները և բասկետբոլի օղակները հինը փոխարինել նորով:	Ընդունվել է	
5.	Խաղահրապարակի կառուցում և խաղային սարքավորումների տեղադրում	Նախագիծը նախատեսվում է Բովաձոր բնակավայրում խաղահրապարակի կառուցում, տարածքի բարեկարգում և ժամանակակից սարքավորումների տեղադրում՝ ապահովելով երեխաների անվտանգ հանգիստը: Այս նախագիծը նպատակ ունի ստեղծել ապահով և գրավիչ միջավայր երեխաների հանգստի և զարգացման համար: Նախագիծը կնպաստի բնակավայրի սոցիալական կյանքի աշխուժացմանը և երեխաների առողջ ապրելակերպի խթանմանը:	Ընդունվել է	
6.	Խաղահրապարակի կառուցում և խաղային սարքավորումների տեղադրում	Հաշվի առնելով համայնքի երեխաների հանգստի և զարգացման համար ապահով, ժամանակակից և գրավիչ միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը, ներկայացվում է առաջարկ՝ Կողես բնակավայրում գործող խաղահրապարակի արդիականացման և նոր խաղային սարքավորումների տեղադրման աշխատանքների իրականացման վերաբերյալ: Աշխատանքների շրջանակներում նախատեսվում է տարածքի մաքրում և հարթեցում, նոր խաղային տարրերի, նստարանների և աղբամանների տեղադրում: Նախագիծը կնպաստի համայնքի բնակիչների կենսամակարդակի զարգացմանը, երեխաների ազատ ժամանակի առողջ և անվտանգ կազմակերպմանը:	Ընդունվել է	
7.	Կողես բնակավայրում մեծահասակների համար տաղավարի տեղադրում	Հաշվի առնելով տարեց բնակիչների ազատ ժամանակի արդյունավետ և հարմարավետ կազմակերպման անհրաժեշտությունը՝ ներկայացվում է առաջարկ՝ Կողես բնակավայրում տաղավարների տեղադրման վերաբերյալ: Նախագիծը նպատակ ունի ստեղծել հարմարավետ և անվտանգ հանգստի վայր, որտեղ մեծահասակները կկարողանան շփվել, հանգստանալ և մասնակցել համայնքի կյանքին՝ մաքուր և բարեկարգ միջավայրում:	Մերժվել է	Հանձնաժողովը նպատակահարմար չի գտել
8.	«Խաղահրապարակ՝ Ագարակ գյուղի երեխաների համար»	Ծրագիրը նպատակ ունի կառուցել ժամանակակից, ապահով և բազմաֆունկցիոնալ խաղահրապարակ «Ագարակ» բնակավայրում՝ ստեղծելով հարմարավետ և գունեղ միջավայր երեխաների՝ ֆիզիկական ակտիվության, խաղի և սոցիալականացման համար: Խաղահրապարակը կներառի տարաբնույթ խաղային սարքավորումներ՝ ճոճանակներ, սահարաններ, հեծանվային փոքր	Մերժվել է	Ագարակ բնակավայրի կողմից նմանատիպ ծրագիր ներկայացվել է

		ուղի, ավազատուփ, նստարաններ և արևապաշտպան ծածկոցներ: Այն նաև կդառնա համայնքի բնակիչների համար ժամանցի և շփման վայր:		
9.	Խաղահրապարակի կառուցում և խաղային սարքավորումների տեղադրում	Ծրագիրը նպատակ ունի բարեկարգել Ագարակ բնակավայրի կենտրոնական պուրակը և տեղադրել հարմարավետ տաղավար՝ համայնքի բնակիչների հանգստի և հանրային միջոցառումների անցկացման համար: Պուրակի տարածքը կմաքրվի, կանաչապատվի և կկահավորվի՝ նոր նստարաններով, աղբամաններով, լուսավորությամբ և նորատունկ ծառերով:	Ընդունվել է	
10.	"Փոշուց Փայլ" - Լեջան	"Փոշուց Փայլ" նախագծի նպատակն է. Վերանորոգել և գեղարվեստորեն ձևավորել Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի վարչական կենտրոնի առաջին հարկի դահլիճը՝ այն դարձնել ներշնչող և ստեղծագործական միջավայր բոլոր միջոցառումների համար ՝ լինի դա բեմական ներկայացում, համերգ, ցուցահանդես կամ կրթական հանդիպում:	Մերժվել է	Մերժվում է հետագայում այլ ծրագրում ընդգրկելու նպատակով
11.	Լեռի Բերդ համայնքի Սվերդլով վարչական տարածքի նոր գերեզմանատան տարածքի ցանկապատում	Առաջարկվում է Լոռի Բերդ համայնքի Սվերդլով վարչական տարածքում գտնվող գործող նոր գերեզմանատան շուրջ տեղադրել ցանկապատ: Հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի Սվերդլով վարչական տարածքում գործող նոր գերեզմանատան բարեկարգման և պահպանման անհրաժեշտությունը՝ նպատակահարմար է իրականացնել գերեզմանատան տարածքի ցանկապատման աշխատանքներ: Ցանկապատի տեղադրումը կնպաստի տարածքի բարեկարգմանը, կկանխի ոչ նպատակային մուտքերն ու կպահպանի տարածքի պատշաճ տեսքը:	Մերժվել է	Մերժվում է հետագայում այլ ծրագրում ընդգրկելու նպատակով
12.	Ֆուտբոլի դաշտի հիմնանորոգում – Ուռուտ բնակավայր	Վերականգնել երբեմնի ֆուտբոլի դաշտը,ցանկապատել և կանաչապատել տարածքը,տեղադրել նստարաններ,դարպասներ,տրամադրել գնդակներ:Ծրագրի իրականացման շնորհիվ կվերականգնվեն ֆուտբոլային ավանդույթները ,ծրագիրը կնպաստի գյուղի 6_ից 40 տարեկան բնակչության մարզական զարգացմանը,գյուղի սոցիալական ներառմանն ու ակտիվացմանը:	Մերժվել է	Հայտ-առաջարկը բացակայում է
13.	Գերեզմանոցների ցանկապատում – Ուռուտ բնակավայր	Սույն առաջարկը նպատակ ունի ցանկապատել գյուղի հարակից տարածքի գերեզմանոցները,զերծ պահելով համայնքային այդ սրբավայրերը անասունների կողմից հասցվող նյութական և հոգևոր վնասներից,աղտոտումից:	Մերժվել է	Հայտ-առաջարկը բացակայում է
14.	Լոռի Բերդ համայնքի	Հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի Սվերդլովի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի և բացօթյա մարզադաշտերի սակավությունը՝	Մերժվել է	Տարածքը համայնքային ենթակայության չէ

	Սվերլովի միջնակարգ դպրոցի տարածքում կառուցել արհեստական խոտածածկով խաղադաշտ	նպատակահարմար է կառուցել արհեստական խոտածածկով խաղադաշտ: Խաղադաշտի կառուցումը կնպաստի դպրոցի աշակերտների ֆիզիկական ակտիվության բարձրացմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը, ինչպես նաև համայնքում սպորտային կյանքի աշխուժացմանը և պատանիների ժամանցի արդյունավետ կազմակերպմանը:		
15.	Խաղահրապարակի կառուցում և խաղային սարքավորումների տեղադրում	Ուռուտ բնակավայրում բնակիչների մեծ մասը երեխաներ ունեցող ընտանիքներ են, բնակավայրում գործում է պուրակ, սակայն այնտեղ չկան անհրաժեշտ սարքավորումներ, նստարաններ և տաղավարներ: Ծրագրի նպատակն է ստեղծել՝ բարեկարգ, ժամանակակից և բազմաֆունկցիոնալ խաղահրապարակ, որը կներառի ինչպես երեխաների խաղային գոտի, այնպես էլ մարզական տարրեր տարբեր տարիքային խմբերի համար:	Ընդունվել է	
16.	Խաղահրապարակի կառուցում և խաղային սարքավորումների տեղադրում	«Հանգստի և խաղի համատեղ տարածք» Լեջան բնակավայրի պուրակ-խաղահրապարակը երկար տարիներ ծառայել է որպես բնակիչների՝ հատկապես երեխաների և ընտանիքների սիրելի հանգստի վայր: Սակայն վերջին տարիներին տարածքը ենթարկվել է բնական մաշվածության և անբավարար խնամքի. խաղային սարքավորումները վնասված են, նստարանները՝ ոչ բարվոք վիճակում են: Այս իրավիճակը ոչ միայն նվազեցնում է բնակիչների հետաքրքրությունը պուրակը այցելելու նկատմամբ, այլև սահմանափակում է երեխաների և երիտասարդների՝ բացօթյա ժամանցի, ֆիզիկական ակտիվության և սոցիալական շփման հնարավորությունները: Բացի այդ, տարածքի ոչ բարեկարգ վիճակը բացասաբար է անդրադառնում համայնքի գեղագիտական տեսքի և համախմբվածության վրա: Համայնքի բնակիչների և երիտասարդների շրջանում նկատվում է մեծ ցանկություն՝ վերակենդանացնելու պուրակը, այն դարձնելու գեղեցիկ, մաքուր և անվտանգ վայր բոլորի համար: Սակայն համայնքի սեփական միջոցները բավարար չեն անհրաժեշտ վերանորոգման, կանաչապատման և տեխնիկական բարելավման աշխատանքների իրականացման համար:	Ընդունվել է	
17.	Խաղահրապարակի կառուցում և խաղային	Ծրագիրը նպատակ ունի Յաղդան գյուղի դպրոցի աշակերտների և համայնքի երիտասարդների համար ստեղծել առողջ ապրելակերպը խթանող պայմաններ՝ կառուցելով խաղահրապարակներ՝	Ընդունվել է	

	սարքավորումների տեղադրում	կարուսելներով և մարզասարքերով: Այն նաև կդառնա համայնքի բնակիչների համար ժամանցի և շփման վայր:		

[1] Աղյուսակում լրացվում են Առաջարկների ներկայացման փուլում առցանց և թղթային տարբերակներով ներկայացված բոլոր առաջարկները: